ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2024 թվականի № 46-Ա

ԱՄԱԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 3-րդ մասի, հիմք ընդունելով *Սերիա ZZ № **104607*** և *Սերիա ZZ № **104694** անաշխատունակության թերթիկները՝* **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Ամալյա Հովհաննիսյանին*** տրամադրել հղիության և ծննդաբերության արձակուրդ 110 օր՝ 2024 թվականի հունվարի 13-ից մայիսի 1-ը ներառյալ:

2. ***Ամալյա Հովհաննիսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Զառի Ժ. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Լարիսա Վարդազարյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2024 թվականի հունվարի 13-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի հունվարի 29
ք. Հրազդան